



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

58, 59, 60, 61,
62, 63, 64, 65,

66, 67, 68, 69, 70,
71, 72, 73, 74, 75

2

L-85

2010



10 145

ՀԱՄԱՐԱՆ

2 աշ ՀՈԳԵՇԱՀ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՅ

L-85

ՎԿԱՅԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅ ԿՈՒՍԱՆԱՅՆ


ՀՈՒՓՄԻՄԵԱՆՅ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆՅ

Տպագրեալ հրամանաւ Վեհափառ Տեառն
ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ Գ,
Աստուածընտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց.



Ի ԹԷՂՈՂՈՍԻԱ,

Ի Տպարանի Իւրիպեան Ռատմնարանին.



1869 = 033Ը.

28415-43

«Եթէ կրնաս ձայնդ բարձրացնել, խօսէ: եթէ գիրք միայն Թողուն բովդ, գրէ: Փողոցին մէջ քարի մը վրայ կանգնած՝ քարոզէ, եթէ կրնաս. եթէ հրապարակական կեանքը փակ է, տանդ մէջ բան սովբեցուր: եթէ ձայն չունիս, օրինակ աւլու կարողութիւն ունիս: Այս ոչ առաքինութիւն է, ոչ կարգէ դուրս գործողութիւն. այլ պարտք է՝ պարզ ու յստակ: Աշխարհիս մէջ Աստուծոյ կողմանէ ա՛յն եղիր՝ ինչ որ է բժիշկը մարմնոյ հիւանդութեանց համար. բժիշկը պարտական է հասնելու ամենայն ցաւազարաց, եւ դու պիտի հասնիս ամենայն տգիտաց: Քու Ստեղծողը կենացդ համարը պիտի պահանջէ քեզնէ: Յոյսդ մի՛ դներ բացասական առաքինութեան վրայ, որ միայն ուրիշի վնաս չընեն է. քեզի օրէնք տրուած է որ հասարակաց գործոյն համար աշխատիս, եղբարքդ սիրես, լուսաւորես, մխիթարես, ազատես մոլութենէ ու մոլորութենէ, եւ առ Աստուած առաջնորդես: Կեանքն ալ այս է, մարդն ալ այս»:

Քիւր. Սեփոն,

(Իմաստասէր եւ Գողարպէտ Գաղղիացի:)

2001



11405-57

Дозволено Цензурою. Тифлисъ, 2 Января 1869 г.



ՏՊԱԳՐԵԱԼ ԱՐԴԵԱՄՐՔ

ՔՐԻՍՏՈՍԱՍԵՐ ՏԻԿՆՈՉ

ԳԱՅԻԱՆԷԻ ԱԻԵՏԻՔԵԱՆ

ԱՐԱՊԵԱՆՑ

Ի ՊԱՏԻՒ ՅԻՇԱՏԱԿԻ

ԻԻՐՈՒՄՆ ԷԶՕՐ ՊԱՇՏՊԱՆԻ

ՍՐԲՈՑ ԿՈՒՍԻՆ ԳԱՅԻԱՆԵԱՅ.





Վ Կ Ա Յ Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

ՍՐԲՈՑ ԿՈՒՍԱՆԱՑՆ

Հ Ո Ւ Փ Ս Ի Մ Ե Ա Ն Յ Ե Ի Գ Ա Յ Ի Ա Ն Ե Ա Ն Յ



որահրաշ եւ գերապայծառ է տօնս»
 կգոչէ այսօր երանելի հայրն մեր Մովսէս Խորենացի. «նորահրաշ եւ գերապայծառ է տօնս», եւ զաւետիս հոգեւոր «ցնծութեան առձայնէ բոլոր Հայաստանեայցս, մշտահաս առաքինութեամբն լուսերանգ «պսակեալ ծաղիօքն զանձինս աստուածատէրս», որք «վկայիցն պատուով ցնծան», եւ նահատակացն արեամբն «զուարճանան.» — Այսօրուան հրաշալի եւ հրաշափառ գեղեցիկ տօնը՝ հոգեւոր ուրախութեան եւ ցնծութեան աւետիս կուտայ, կասէ, բովանդակ ազգիս Հայոց, եւ լուսափայլ առաքինութեան անթաւամ ծաղիկներովը կպսակէ այն աստուածատէր անձինքն որ մարտիրոսաց պատուոյն վրայ կցնծան, եւ նահատակաց արիւնին ճմարտութեան համար թափուելը յիշելով կը զուարճանան:



Եւ յիրաւի, ով տօնասէր ունինդ իրք, որ Հայր չը-
զուարճանար այսօր հոգեւոր անպատմելի ցնծու-
թեամբ՝ թէ որ գիտնայ կամ միտքը բերէ սրբօց
Հռիփսիմեանց եւ Գայիանեանց սքանչելի նահատա-
կութեան պատմութիւնը, եւ յիշէ թէ ինքն ալ՝ ըս-
լոր մեր ազգին հետ՝ հոգեւոր հարազատ եւ սիրելի
զաւակ է այնպիսի սրբատուն մայրերու, որ աշխար-
հիս երեսէն երկինք թռած ժամանակները ծնան զմեզ
ի Քրիստոս, եւ այժմ՝ հազար հինգ հարիւր տարիէ
ի վեր բարեխօս եւ փաստաբան են մեր ազգին հա-
մար առաջի աթոռոյն Քրիստոսի: — Տեսնեմք ուրեմն
թէ ոյք էին Հռիփսիմեանք, եւ ինչպէս եղաւ նո-
ցա նահատակութիւնը:

Քրիստոսի Տեառն մերոյ համբարձմանէն ետքը
թէպէտ սուրբ առաքեալք եւ նոցա աշակերտները
աշխարհիս ամէն կողմը քարոզեցին եւ տարածեցին
քրիստոնէութիւնը, բայց քրիստոնեայք մինչեւ չոր-
րորդ դարուն սկիզբները, այսինքն Քրիստոսէ մինչեւ
երեքհարիւր տարի ետքը, ամէն տեղ քիչևոր էին՝
հետեանոսաց շաւորութեանը նայելով, եւ իրենց
խոստակրօն վարքովը յանգիմանութիւն չինելով կռա-
պաշտից անօրէնութիւններուն՝ առելի էին նոցա
բնականապէս եւ արհամարհեալ. շատ տեղ ալ ծա-
ծուկ կպահէին իրենց քրիստոնէութիւնը ու գեանա-
փոր տեղուանք կկատարէին իրենց աստուածպաշ-
տութեան կարգերը: Այն նախնի քրիստոնէից խոնարհ
եւ հալածական կենօք ապրիլը այս մեծ օգուտն ու-
նէր որ նոքա աւելի եռանդով՝ աւելի զգուշաւոր բա-

յեպաշտութեամբ կկատարէին իրենց քրիստոնէական
հաւատոյ պարտքերը այն ժամանակները՝ քան թէ
երբոր կայսերք եւ թագաւորք եւ իշխանք եւ անհա-
մար ժողովուրդք միանգամայն քրիստոնեայ եղան, եւ
քրիստոնէութիւնը արձակ համարձակ սկսաւ պաշ-
տուիլ՝ իբրեւ տէրութեան կրօնք, ինչպէս որ եղաւ
չորրորդ դարուն սկիզբէն՝ երբոր մեծն Կոստանդիա-
նոս դարձաւ ի քրիստոնէութիւն:

Եւ ահա այն հալածանաց ու նեղութեան ժամա-
նակները երեքհարիւրի չափ քրիստոնեայք արք եւ
կանայք Հռոմ քաղաքին մէկ ծայրը հաւաքուած բնա-
կելով, ամենայն ջերմեռանդութեամբ եւ սրբու-
թեամբ իրենց քրիստոնէական պարտքերը կկատարէ-
ին. մանչ սղայոց գաստիարակ էին սրբասէր քահա-
նայք, եւ ազջկանց խրատող՝ սրբուհին Գայիանէ, որ
եւ այն ազջկանց մէջէն կուսակրօն վարք ընտրողնե-
րուն մայր էր հոգեւոր եւ անմիջական խնամածու,
եւ ինքը կայսերական ազնիւ ցեղէ էր: — Նորա սանն
ու սիրելի աշակերտուհին էր նաեւ իւր ազգակիցը՝
երանելին Հռիփսիմէ, որ ինքզինքը կուսական մաք-
րութեամբ նուիրած էր Աստուծոյ ընդ պաշտպանու-
թեամբ Տիրամօր Կուսին Մարիամաւ, եւ ըլլոր ընկե-
րակցացը մէջ ամենէն աւելի գիրազանց կերպով կը-
փայլէր խոստակրօն ճգնութեամբ եւ ամէն տեսակ ա-
ռաքինութեամբ:

Հռովմայեցւոց կայսր այն ժամանակները անօրէնն
Դիոկղետիանոս էր, անգութ, փառամոլ եւ հեշտասէր
մարդ: որ անուանի է քրիստոնէից դէմ 303 թուին

Հանած տասնամեայ սարսափելի հալածանքովը : Այն մեծ հալածանքէն մէկ քանի տարի առաջ ուղեց Գիտկղետիանոս ուրիշ կանանցմէ զատ կին մի եւս առնուլ՝ ըստ թոյլտուութեան հեթանոսական օրինաց : Մարգրիկ յուզարկեց ամէն տեղ, բայց աւելի Հռոմ քաղաքին ամէն կողմերը, որ գեղեցիկ աղջկունք վնասուեն գաննեն եւ նոցա պատկերները նկարելով բերեն իրեն, որպէս զի որոնն որ աւելի հաւնի՝ զնա առնուանէ իրեն թագուհի : Հասան այն մարգրիկը նաեւ Գայիանէի կուսաստանը, եւ զՏրաշապեղն Հռիփսիմէ տեսածնեբուն պէս զմայլեցան, քաշեցին պատկերն ու տարին թագաւորին : Իսկ նա իսկոյն հաւնեցաւ, եւ հրամայեց որ հարմնիքի պատրաստութիւնները տեսնուին :

Անգին սուրբն Գայիանէ եւ նորա պարկեշտասուն սանը Հռիփսիմէ եւ միւս ընկերակիցները՝ օգուեն մէջ ուրուր տեսնող աղաւնիներու պէս ահուգողի մէջ ընկան : Չերմեռանգ աղօթիւք առ Աստուած գլմեցին, եւ ամէնքը միաբան՝ եօթանասուն հոգիէն աւելի՝ որոշեցին որ ելնեն փախչին ծովով հեռաւոր երկիրներ : Աստուած յաջողեց որ Աղեքսանդրիա զնացող նաւ գանուեցաւ պատրաստ, փոխեցին իրենց հագուստները, մտան նաւը եւ զնացին եգիպտոս, անկից ոտքով ճամբայ ելան գէպ ի Երուսաղէմ. քաղաքներու գեղերու մօտ տեղուանք խումբ խումբ կբաժնուէին իրարմէ, իսկ անբնակ եւ անշէն տեղերը մէկզմէկ կգանէին. այն կերպով պանդուխտ եւ աղքատ ուխտաւորներու պէս քալեցին Քրիստոսի Տեառն մերոյ անօրինական տեղերը, եւ տեսիլքով հրաման առին Աս-

տուծմէ որ երթան Հայաստան : Ճամբան եգիպտոս քաղաքը հանդիպեցան, որ է Ուռհա, երկրպագութիւն արին փրկչական անձեռագործ պատկերին, այսինքն սուրբ Դաստառակին որ հոն պահուած էր. անկից անցան Հայաստանի սահմանները, եւ խումբ խումբ բաժնուեցան. ոմանք, ինչպէս սրբուհին Մանէ, զնացին Դարանաղեաց գաւառը. ոմանք, ինչպէս սրբուհին նունէ, մինչեւ Վրաստանի կողմերը, եւ ուրիշները ուրիշ տեղուանք. եւ ուր որ կերթային՝ զանազան հրաշքներ գործելով ու բժշկութիւններ կատարելով կտարածէին քրիստոնէական սուրբ հաւատքը, որչափ որ կարելի էր տարածել այն կռապաշտ ու կռամոլ ժողովուրդներուն մէջ :

Իսկ սրբուհին Գայիանէ եւ Հռիփսիմէ իրենց միւս ընկերներովը գնացին գէպ ի Խլաթ, անկից Բերկրի, անկից Հոգեաց վանք ասուած տեղը, ուր սուրբ Աստուածածնայ պատկերը կար՝ Բարթողիմէոս առաքելոյն բերածը. անկից անցան Վանայ կողմերը : Այն տեղերն ալ մնացին սուրբ կուսանքներէն մէկ քանին. իսկ իրենք՝ Գայիանէն ու Հռիփսիմէն՝ երեսուերհինգ ընկերներով գնացին Արարատեան աշխարհը, եւ Վաղարշապատ քաղաքէն գուրս այգիներու մէջ պարապ շէնք մի գտնելով՝ որ հնձան՝ այսինքն գինի կոխելու տեղ էր, հոն բնակեցան քանի մի օր : Ապրուստ ամենեւին չունէին. միայն իրենցմէ մէկը տեղեակ լինելով ապակի շինելու արուեստին, նորա շինած ուլունքը կրկիւնէին Վաղարշապատ՝ ծախել կուտային, նմանապէս իրենց զանազան մանր մունր ձեռագործները, եւ անոնց փողովը հաց ու հագուստ կգնէին :

Վաղարշապատի ընակիչները կղարմանային այն անձանօթ օտարականներուն վրայ, եւ չէին հասկընար թէ ով են, ուսկից եւ ինչ բանի համար այն կողմերը եկեր են. բայց քիչ ժամանակէն իմացուեցաւ ամէն բան: Վասն զի Դիոկղետիանոս կայսրը երբոր լսեց թէ Գայիանէն ու Հռիփսիմէն իրենց ընկերներովը փախեր են իւր ձեռքէն, սաստիկ բարկացաւ, Գայիանէի վանքին մէջ մնացած ուրիշ կանայք եւ կուսանք որ կային՝ սպաննել տուաւ, որոց գլխաւորն էր սրբուհին Զոյի կամ Եւզոյի. եւ իմանալով որ Գայիանեանք ու Հռիփսիմեանք Եգիպտոսի ու Պաղեստինու կողմերէն դէպ ի Հայաստան փախեր են, մարդիկ յուղարկեց մեր Տրդատ թագաւորին՝ որ Վաղարշապատ քաղաքը կնստէր. նամակ մի ալ գրեց Տրդատայ, որոյ իմաստը այս էր թէ «Քրիստոնէից չար ազանդովը մուտրած մարդիկ մեծամեծ վնասներ կհասցընեն մեր տէրութեան, եւ մեր հրամանները ոտքի տակ առնելէն զատ՝ մեր աստուածներն ու կուռքերն ալ կարհամահն ու կնախատեն. մինչեւ էրիկները կնիկներէն եւ կանայքը էրիկներէն կբաժնեն: Նոցա մէջ կոյս աղջիկ մի տեսայ, հաւնեցայ տեսքին ու կամեցայ ինձի կին առնուլ. զինքը իրեն գասախարակին հետ ի միասին ձեր կողմերը փախուցին: Ուստի փոյթ ունեցիր եղբայր՝ գանկու զանոնք ու չարաչար պատժելու. իսկ Հռիփսիմէ անունով հրաշագեղ կուսանք ինձի յուղարկէ. բայց թէ որ դուն աւելի հաւնիս նորա գեղեցկութեանը, քու քովդ պահէ, վասն զի բոլոր Հռովմէական տէրութեանս մէջ նորա նմանը չգտնուեցաւ»:

Տրդատ այն գիրը կարգալուծն պէս սաստիկ հրաման հանեց որ Հայաստանի ամէն կողմը փնտռեն ու անպատճառ գտնեն այն փախստականները: Եւտով գտնուեցան կուսանքը, որովհետեւ՝ ինչպէս որ ասինք՝ Վաղարշապատէն հեռու չէր նոցա ձգնարանը. իսկոյն իմացուցին թագաւորին, եւ նա գունդ մի զօրք յուղարկեց պաշարեց հնձանը երկու երէք օր, որ մէկը չկարենայ փախչիլ: Քաղաքացիք մեծ բազմութեամբ թափեցան այն տեղը, եւ կղարմանային թէ այնպիսի տկար եւ փափկասուն կանայք ուսկից ուր եկեր են. իսկ Հռիփսիմէի շնորհալի կերպարանքը տեսնողները չէին կշտանար նորա գեղեցկութիւնը գովելէն ու իրարու պատմելէն:

Չորրորդ օրը հրամայեց Տրդատ որ Գայիանէի ու միւս ընկերացը քով պահպաններ դրուին. իսկ Հռիփսիմէն իրեն պալատը բերեն որ հարս առնու զինքը եւ անէ երկրորդ թագուհի, որովհետեւ առաջինը Աշխէն տիկինն էր: Իսկոյն սակիպատ գահաւորակ (քախսրեխան) բերին հնձանին դուռը, Հռիփսիմէին համար ալ ազնիւ ու գեղեցիկ հագուստներ ու զարդարանքներ, որպէս զի անոնցմով զարդարուի ու այնպէս մտնէ Տրդատայ պալատը:

Սրբուհին Գայիանէ տեսնելով իւր սրբասէր սանին գլխուն հասած վելջի վտանգն ու փորձութիւնը, դարձաւ ասաց անոր. «Սիտքդ բեր, որդեակ իմ, այն կայսերական փառքերն որ եթէ ուզէիր կարող էիր քու երկրիդ մէջ վայելել, բայց դուն Քրիստոսի անանց թագաւորութեանը անպատմելի փառքին ցան-

կացար . չլինի որ այս բարբարոս մարդկանց ձեռքը մատնես . քու անարատ պարկեշտութիւնդ » : Իսկ սրբուհին Հռիփսիմէ զօրացաւ Հոգւով սրբով , ու ձեռքերը խաչաձեւ տարածած ' ընկաւ երեսի վրայ եւ սրտառուչ պաղատանօք բարձր ձայնով խնդրեց իւր երկնաւոր Փեսայէն որ զօրացընէ զինքն ու իւր ընկերները ընդդէմ որոգայթից սատանայի , եւ ազատէ այն ահագին փորձանքէն : Նոյնպէս աղօթքի կեցած էին նաեւ միւս ընկերները ' սրբուհւոյն Գայիանեայ առաջնորդութեամբը :

Այն միջոցին ժողովուրդը թագաւորական սպասաւորներով ու նախարարներով հնձանին դուռը լցուած ' աւետիս կուտային սրբոյն Հռիփսիմեայ ու կասէին . « Աչքդ լոյս , ս'իլ աղնիւ կոյս , թագուհի եղար Հայոց մեծաց » : Մէկ կողմանէ ալ կասէին միւս ընկերներուն . « Շուտ արէք ' զարգարեցէք հարսը այս մեր բերած թագաւորական հագուստներով . ձեզի ալ թագաւորէն մեծամեծ պարգեւներ կարբուին » :

Մէկ մ'ալ յանկարծ սաստիկ որոտմամբ երկինքը գոռաց , այնպէս որ բոլոր ժողովուրդը սարսափած իրար անցաւ : Զայն եկաւ երկնքէն այն սուրբ կուսանաց թէ « Մի վախնաք , հաստատ կեցէք , սիրա առէք . վասն զի ես ձեզի հետ եմ , ու ինչպէս որ մինչեւ ցայսօր պահեցի զձեզ եւ մինչեւ այստեղս ողջ անարատ հասուցի , այնպէս ալ մինչեւ վերջը պիտի օգնեմ ձեզի որ կարող լինիք գալ վայելել ձեզի համար պատրաստուած անպատմելի ուրախութիւնն ու յաւիտենական փառքը : Մանաւանդ դուն , ս'իլ Հռիփսիմէ ,

ուրախ կեցիր . վասն զի ինչպէս որ հեռաւոր երկրէ այս կողմերս ձգուեցար , այնպէս ալ այս աշխարհէս երկնից արքայութիւնը պիտի անցնիս շուտով (1) » : Երբոր Տրդատայ մարդիկը գնացին պատմեցին նորա իրենց տեսածներն ու լսածները , հրամայեց թագաւորն որ բռնութեամբ առնուն բերեն Հռիփսիմէն իրեն պալատը : Իսկոյն գնացին սպասաւորները , քաշեցին հանեցին սուրբ կոյսը հնձանէն դուրս , ու երբեմն վեր վերուցած ' եւ երբեմն գետնին երեսէն քաշըւտելով կտանէին թագաւորին պալատը . իսկ նա անդադար կաղաղակէր , « Տէր Յիսուս , օգնէ ինձ » . նոյնպէս եւ բոլոր ընկերակիցները կաղօթէին նորա համար առ Աստուած . իսկ ժողովուրդը անթիւ բազմութեամբ ետեւէն կ'վազէր :

Տարին զսուրբն Հռիփսիմէ ' պալատին ներսի սենեակներէն մէկուն մէջ փակեցին ու քիչ մը ժամանակ մինակ թողուցին . եւ նա բարձր ձայնով աղօթք կանէր առ Աստուած որ չթողու զինքը հեթանոսաց ձեռքը , եւ չմատնէ նոցա չար կամացը . այլ ինչպէս որ իւր այնչափ սուրբերը ազատած է զանազան փորձանքներէ ' զինքն ալ ազատ եւ անարատ պահէ մինչեւ վերջը : Եկաւ մտաւ գոռոզ թագաւորը այն սենեակը , եւ տարակոյս չունէր ամենեւին որ սրբուհւոյն յամառութեանը պիտի յաղթէ . ժողովուրդն ալ արգէն պալատին չորս բոլորը եւ քաղաքին ամէն կողմը մեծ ուրախութեան մէջ էին ' իրենց թագաւորին

(1) Հռիփսիմէ անունը յունարէն է , ուիսառէնի , որ կնշանակէ ձգուած , նետուած :

նոր հարսանեացը պատճառաւ: Բայց Աստուած լսեց
 Հռիփսիմէի եւ նորա ընկերացը աղաչանքին, եւ այն-
 պէս զօրացուց այն տկար օրիորդը որ Տրգատայ պէս
 անյաղթելի հսկան, որ անուանի էր ուժին ու քաջու-
 թեանը կողմանէ արեւելք եւ արեւմուտք, ժամերով
 կռուրտեցաւ պատերազմեցաւ սրբուհւոյն հետ ու
 չկրցաւ յաղթել անոր: Յոգնած դադրած դուրս ե-
 լաւ, հրամայեց որ երթան շուտով՝ պալատը բերեն
 բռնութեամբ Գայիանէն ու սենեկին դուռը կեցընեն
 որ խօսք անցընէ Հռիփսիմէին՝ թագաւորին կամքը
 կատարելու:

Իսկ նա թէպէտ յանձն առաւ իւր սանին հետ խօ-
 սիլ, բայց դրան մէջէն այսպէս սկսաւ ասել անոր
 լատիններէն. «Աղէկ նայէ, որդեակ իմ, չլինի թէ խա-
 բուիս այս անցաւոր փառքերէն, ու յաւիտենական
 թագաւորութենէն զրկուիս»: Հասկըցան ոմանք նորա
 խօսքերն ու վազեցին քարեր բերին, անոնցմով զար-
 կին բերնին՝ ակռաները թափեցին, եւ կտտիպէին որ
 խրատ տայ Հռիփսիմէի՝ թագաւորին խօսքէն չեղնե-
 լու: Իսկ նա աւելի տաք կերպով սկսաւ քաջալերել
 զկոյսն ու ասել. «Մի վախնար, ամուր կեցիր. այժմ՝
 կտեսնես զՔրիստոս Տէրն մեր՝ որում այնքան կփա-
 փաքէիր, Մի մոռնար որդեակ՝ այն մայրական խնամ-
 քըն ու խրատները՝ որովք զքեզ մեծցուցեր եմ: Մի
 մոռնար որդեակ իմ, որ դուն Քրիստոսի հարս եղած
 ես, եւ սուրբ խաչիկ նշանաւած ու սուրբ Աստուածած-
 նայ յանձնուած: Մի մոռնար այն երջանկութիւնը
 որ պատրաստեր է մեզի Աստուած ի հանդերձեալն՝

թէ որ մինչեւ վերջը համբերեմք, եւ այն սոսկալի
 տանջանքներն որ պատրաստուած են մեզաւորաց եւ
 աշխարհասիրաց: Գիտցիր որ մեր Տէրն ու թագաւո-
 րը ձեռքէ չթողուր զմեզ, այլ կպահէ կպահպանէ
 ամէն մեղքէ: Ինչպէս որ այսօր ալ խոստացաւ մեզի.
 միայն թէ մեք նորա սիրոյն չբաժնուիմք՝ մինչեւ որ
 արժանի լինիմք նորա դէմ յանդիման տեսութեա-
 նը»: Այս բաները լսելով թագաւորին մարդիկը, նո-
 րէն զարկին ջախջախեցին երանելոյն բերանն ու քա-
 շեցին տարին զինքը մէկգի. եւ թագաւորը նորէն
 ուղեց նուաճել զսուրբն Հռիփսիմէ, բայց չկրցաւ:
 Պատըռտեց Հռիփսիմէն թագաւորին վրան գլուխը,
 գետին զարկաւ զհսկայն, եւ ինքը թէպէտ եւ բզրկ-
 տած հազուստով, բայց անարատ մնալով սրբու-
 թեամբ, բացաւ սենեկին դուռը, դուրս ելաւ սաստ-
 կութեամբ, ճգքեց ժողովրդեան բազմութիւնը, վա-
 զեց գնաց մինչեւ հնձանին մօտիկ, բարձր ձայնով
 աւետիս տուաւ իւր ընկերներուն. յետոյ ծունկի
 վրայ եկած՝ փառք տուաւ Աստուծոյ եւ խնդրեց պա-
 ղատանօք որ մինչեւ վերջը հաստատ պահէ զինքը
 սուրբ դիտաւորութեանը վրայ:

Ընկերներէն ոմանք եւ իրենց քահանաները լսելով
 Հռիփսիմէի ձայնը, դուրս ելան տեղերէն ու նորա
 ետեւէն վազեցին. սկսան հեան ի միասին աղօթք ա-
 նել որ մինչեւ վերջը անյաղթելի մնայ փորձութե-
 նէ: Նոյն գիշերը եկան հասան թագաւորին հրամա-
 նովը իշխաններ ու սպասաւորներ դահլճներով, դահ-
 ճապեան ալ նոցա հետ. կպեցին ձեռքերն ետեւը,

լեզուն դուրս քաշեցին կտրեցին. հանեցին վրայի հագուստը. գետինը չորս հատ ցից զարկին ու անոնց կապեցին ձիգ ձիգ քաշելով սրբուհւոյն ձեռքերն ու ոտքերը. ջահերով ու կանթեղներով երկար ատեն այրեցին խորովեցին բոլոր մարմինը, յետոյ սուր սուր քարերով պատռւտեցին փորն ու աղիքները վար թափեցին. եւ մինչդեռ ողջ էր Քրիստոսի անարատ գառնուկը, փորեցին հանեցին աչուրները, եւ անգամ անգամ կտրտեցին զինքը. մէկ կողմանէ ալ կասէին. «Այսպէս պէտք է կորսուի ս՛վ որ թագաւորի հրամանը ոտքի տակ կառնու»:

Սրբուհւոյն Հռիփսիմեայ այսպիսի փառաւոր նահատակութիւնը տեսնելով միւս ընկերները, լալով ողբալով եկան ժողովուեցան որ հրաշալի վկային մարմինը վերցընեն ու պատուով թաղեն: Իշխաններն ու դահիճները սաստեցին նոցա. եւ երբ տեսան որ չեն վախնար, զամէնքն ալ — որ երեսունուերկու հոգի էին — թրէ անցուցին: Եւ նոքա փառք տալով Աստուծոյ՝ ուրախութեամբ նահատակուեցան:

Այն երջանիկ կուսանաց մէկը հիւանդ լինելով՝ հնձանին մէջ էր ու չէր կրցած գալ տեսնել Հռիփսիմէի եւ միւս ընկերացը նահատակութիւնը: Դահիճներն եկան, զինքն ալ այն տեղը զարկին սպաննեցին՝ մինչդեռ նա աղօթք անելու հետ էր:

Սրբուհին Գայիանէ ուրիշ երկու ընկերով այն գիշերը պալատին մէջ բանտ դրուածի պէս փակուած էր. երկրորդ առաւօտը դահճապետը գնաց թագաւորին

որ հրաման առնու զանոնք ալ սպաննելու: Թագաւորը, որ բոլոր գիշերը շփոթութեամբ ու տրամուլթեամբ անցուցեր էր, կարծեց թէ Հռիփսիմէն դեռ կենդանի է. իսկոյն ուրախութեամբ վեր ցատքեց, մեծամեծ պարգեւներ սկսաւ խօստանալ՝ թէ որ մէկը կարենայ նորա միտքը դարձնել: Բայց երբոր դահճապետը պատասխանեց թէ «Տէր արքայ, նորա պէս կորսուին քու թշնամիներդ. հասա միւս կախարգը կենդանի է երկու ընկերներովը», Տրդատ սաստիկ տրամուլթեմէն ու կատաղութեմէն լացաւ. յետոյ հրամայեց որ չարաչար մեռցընեն զսրբուհին Գայիանէ, լեզուն ծոծրակէն դուրս հանելով, որ յանդգնեցաւ՝ կասէր՝ պատճառ լինելու Հռիփսիմէի պէս անմամն գեղեցկի մը կորսուելուն:

Հանեցին Գայիանէն երկու ընկերներովը՝ շղթաներով կապած. չորս չորս ցից զարկին գետինն ու անոնց վրայ պրկեցին նոցա ձեռքերն ու ոտքերը. ծակեցին նոցա պճղունքն ու ոչխար մորթողներուն պէս փչեցին՝ եղէգ գնելով, քերթեցին հանեցին նոցա մորթը. ծակեցին նաեւ ծոծրակներն ու անկից դուրս քաշեցին լեզուները. փորերն ալ պատռեցին քարերով ու աղիքները դուրս թափեցին, յետոյ գլուխները կրտրեցին: — Եւ այսպէս սքանչելի համբերութեամբ նահատակուեցան նաեւ սուրբ Գայիանեանք՝ Հռիփսիմեանց նահատակութեան երկրորդ օրը, այսինքն նոյեմբերի 8-ին 501 թուին Քրիստոսի. անոր համար ալ վայելչապէս Հռիփսիմեանց տօնին երկրորդ օրը կոծնէ մեր սուրբ եկեղեցին Գայիանեանց տօնը:


վրան վեց օր անցաւ, Տրդատ թագաւորը չարա-
 չար պատժուեցաւ յԱստուծոյ, դիւահարեցաւ ու
 խողակերպ դազան դարձաւ, — ինչպէս որ սուրբ Լու-
 սաւորչայ տօնին օրը պիտի պատմեմք. — Հեան ալ
 իշխաններէն շատը պատուհասեցան սոսկալի հա-
 րուածներով: Այն միջոցին տասնըչորս տարի էր որ
 սուրբ հայրն մեր Գրիգոր Լուսաւորիչ Արտաշատու
 Խոր վիրապը ձգուած կճգնէր: Երեք օր յետոյ աս-
 տուածային յայտնութեամբ հանուեցաւ նա վիրապէն,
 եւ իսկոյն գնաց ժողովեց ամիսիկեց սրբոց Հռիփսի-
 մեանց եւ Գայիանեանց մարմինները որ դաշտին մէջ
 նետուած էին ինն օրէ հետէ, բայց անարատ եւ ա-
 նուշահոտ մնացեր էին հրաշքով, ոչ դազան մօ-
 տեցեր էր նոցա՝ ոչ թռչուն: Յետոյ բժշկեց զթա-
 գաւորը, լուսաւորեց զչայստան, եւ երեք վկայա-
 րան կամ մատուռ շինեց. մէկը սրբոց Հռիփսիմեանց
 նահատակուած տեղը, մէկը սրբոց Գայիանեանց, եւ
 միւսը հիւանդ կուսին նահատակուած տեղոյն մօտ՝
 հնձանին քով, եւ ամէն մէկուն տապանները առաջ
 թագաւորական մատանիով եւ յետոյ իւր հայ-
 րապետական կնքովը կնքած՝ վկայարաններուն մէջ
 տեղաւորեց: Հարիւր տարի յետոյ այն տապաններուն
 տեղը անյայտ եղած էր, սուրբ հայրապետն մեր Սա-
 հակ Պարթեւ աղօթքով խնդրեց յԱստուծոյ, գտաւ
 այն տապաններն ու իւր կնիքն ալ անոնց վրայ զարնե-
 լէն յետոյ՝ նոյն վկայարաններուն մէջ դրաւ: Բայց
 երբոր երկուհարիւր տարի ետքը նորէն անյայտացան,
 երանելին Կովտաս Կաթողիկոս փորել տուաւ՝ գուրս

հանեց տապանները, նորէն կնքեց, եւ երեք վկայա-
 րանները ի հիմանց նորոգելով՝ մէկմէկ հոյակապ ե-
 կեղեցիներ շինեց, որ մինչեւ ցայսօր ամենացանկալի
 ուխտաաեղիք են մեր ազգին բարեպաշտներուն. ափ-
 սնս որ առ այժմ մեծապէս կարօտ նորոգութեան եւ
 պայծառութեան, մանաւանդ Հռիփսիմեանց եւ Գայ-
 իանեանց տաճարները: Երանի մեր ազգին՝ որ այս-
 պիտի մայրեր ունեցաւ ի Գրիստոս ի սկզբան համաշ-
 խարհական դարձին իւրոյ ի կռապաշտութենէ ի
 քրիստոնէութիւն, եւ հազար երանի՝ թէ ամէն ժա-
 մանակ լաւ ճանաչէ նոցա հզօր բարեխօսութեան եւ
 պաշտպանութեան յարգը, հետեւող լինելով այն սըր-
 բասէր կուսանաց անդրգուելի հաւատոյն, աներկբայ
 յուսոյն եւ անշիջանելի սիրոյն ու սրբութեանը:

Սրբոց Հռիփսիմեանց եւ Գայիանեանց անարատ
 մարմիններուն վերայ շինուած հին եւ նոր նիւթա-
 կան յիշատակներէն վար չեն մնար, մանաւանդ թէ
 շատ աւելի վեր ու գերազանց են այն գրաւոր յիշա-
 տակներն ալ զոր կանգներ են Հայաստանեայց սուրբ
 եկեղեցւոյ մէջ մեր նախնի Հայրապետները: Եւ նախ
 սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին շարագրած
 գեղեցիկ քարոզն ունիմք ժամագրքին մէջ, որ է
 «Աստուած մեծ հզօր եւ վառաւորեալ» քարոզը:

Շատ վսեմ եւ զարգարուն սճով ներբող մի ալ շա-
 րագրած է սուրբն Մովսէս Խորենացի, եւ Շնորհալի
 հայրապետն մեր ներսէս «Հանճարեղ շնորհալիգ» եւ
 «Երջանիկ հողիահրաշ» տաղերը: Բայց ամենէն աւե-
 լի սիրելի է ամենեցուն այն գեղեցիկ շարականն որ

11405-57



Կոմիտաս կաթողիկոսը շարադրած է՝ յետ կանգնելոյն
այժմու Հռիփսիմեանց վկայարանը, եւ այն տեղ ա-
ւագ սեղանին ներքեւը հանդուցանելոյն այն ամբիծ
կուսին հրաշագեղ մարմինը .

«Անձինք նըւիրեալք սիրոյն Գրիստոսի,
Երկնաւոր նահատակք եւ կուսանք իմաստունք .
Ի պարծանըս ձեր բարձրացեալ տօնէ
Մայր Սիոն դասերօքն իւրովք» : —

Ո՛վ Գրիստոսի սուրբ սիրոյն ընծայուած սուրբ օրիորդներ,
Ո՛վ երկնային քաջ նահատակք եւ իմաստուն կուսաններ .
Ձեր փառքովը կըպարծենայ մայր մեր Սիոն Եկեղեցի,
Եւ ձեր տօնը կըկատարէ իւր անարատ գաւակներով :

«Բարբառք երկնաւորըք լըցին զերկիր»
Քանզի հոս անուշից բուրեցայք ի Գրիստոս .
Ողջակէզք բանաւորք եւ զոհք փըրկութեան,
Եւ որոջք անարատք ընծայեալք Աստուծոյ» : —

Երկրնքի հրեշտակաց ձայներն երկիրըս լեցուցին,
Վասն զի ձեր անոյշ հոտովը գոարճացաւ Տէր մեր Գրիստոս .
Դուք ողջակէզ էք բանական, դուք մեզ համար գոն փըրկութեան,
Դուք մեկմեկ գառն էք անարատ՝ որ Աստուծոյ ընծայուեցաք :

«Գեղեցկութիւնըք մարմնաւոր պայծառութեան ձերոյ
Յիմարեցոյց ըզթագաւորն, եւ պակեան հեթանոսք .
Ի գեղ ըսքանչելի աստուածատուր կուսանացն
Տարփացեալ զըւարթունքն ընդ մարդկան տօնեցին» : —

Ձեր մարմնաւոր գեղեցկութեան պայծառութիւնը տեսնելով
Քազաւորը ինչքը բռնուց, ու կուսպաշտները ապշեցան .
Իսկ ձեր հօգուոյն ըսքանչելի տեսքին վերան ըզմայլելով
Հրեշտակք ձեզի զարնրեցան, մարդկանց հետ տօն կատարեցին :



72-2011

«Դարձեալ վերըստին արարչագործ զօրութիւն,
Եւ դարձեալ Եդեմ աստուածատունկ զարգարի .
Քանզի ծառն կենաց տընկեցաւ ի դրախտին,
Բերելով մեզ պըտուղ զերանելին Հռիփսիմէ» : —

Անա նորէն երեսցաւ արարչական զօրութիւնը,
Եւ նորէն կգարդարուի աստուածատունկ Եդեմը .
Վասն զի դրախտին մեջտեղը կենաց ծառը տընկեցաւ
Ու մեզի պըտուղ բերաւ գերանելի սուրբ Հռիփսիմէն :

«Երկունք մահաբերք անիծիցըն լուծան,
Եւ Ադամ վերըստին աստուածակերպ ճոխանայ .
Փոխանակ Եւայի դըստերըք նորա
Մարտիրոսք եւ կուսանք ընծայեալք Աստուծոյ» : —

Մահաբեր ցառն որ անեծքով կը սանձանուած՝ փարատեցաւ,
Եւ Ադամ անա նորէն Աստուծոյ պէս կըճոխանայ .
Եւայի տեղ նորա անմոլ գաւակները առաջ անցան,
Իրեն կուսանք եւ մարտիրոսք Տեառն Աստուծոյ ընծայեցան :

«Զօրըք հրեշտակաց ընդ մարդկան տօնեցին,
Եւ կանայք ի յերկինըս գրեցան զինաւորք .
Կուսութեամբ ընդ մահու պատերազմեալք յաղթեցին
Խաչակից լինելով կուսածին Արարչին» : —

Երկնային հրեշտակները մարդկանց հետ խառն ուրախացան,
Եւ կանայք երկրնքի զօրք զըրուեցան մեծ քաջութեամբ .
Կուսութեամբ իրեն գեներով յաղբեցին մահու մեղաց,
Կուսածին Արարչին հետ ի միասին խաչ հանուելով :

«Է՛ զարմացումն եւ ի վեր քան ըզհրաշս
Խորհըրդոց եւ բանից հրեշտակաց եւ մարդկան .
Քանզի Էնն Աստըւած ամենազօր զօրութեամբն
Խոնարհեալ տեսանէր ըզհանգէս կուսանացն» : —

Ո՛վ հրաշալի գարմանալի տեսարան ,
Հրեշտակաց եւ մարդկանց խելքէն մրտքէն գերագանց բան ,
Որ էնն Աստուած ամենակալ իւր գորութեամբը վար իջած
Սուրբ կոյսերուն արիական կրօուին հանդէսը կըղիտէր :

« Ընկերքը միամիտք մարմնական կենցաղոյս ,
Նահատակք հաւատարք եւ հոգւով միացեալք ,
Միաբան ընթացեալք ի տեղի ճակատու ,
Զինեցան հաւատովք եւ կացին յանդիման » : —

Աշխարհիս մեջ իրարու հետ ազանոյ պէս անմեղ ընկերք ,
Հաւասար կրտորճութեամբ ու մեկ սրտով քաջ նահատակք
Ի միասին յարձակեցան պատերազմին ասպարեզը ,
Հաւատոյ գէնքերն առած՝ քշնամեաց դէմը կանգնեցան :

« Թուլացան կորովիք հաստաձիգ աղեղանց ,
Եւ տրկար կանայքըն վառեցան զի՛նու .
Թագաւորըն պերճացեալ զօրութեամբ եւ փառօք
Ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր » :

Հաստ աղեղի տեր կրտորիճներ բուլցան ընկան իրենց ուժէն ,
Եւ տրկար կընիկմարդիկ ըսպառազէն զարդարուեցան .
Այն բազաւորն որ յիրաւի կրպարծենար ուժով փառքով ,
Գեռանասակ օրիորդէն մեծ ամօրով յաղբընցաւ :

« Ժողովեալ բազմութեան ազգաց եւ ազանց
Ոչ զօրէին առ մի նահատակ .
Քանզի հասեալ ի թիկունս աներեւոյթ զօրութիւն
Խորտակեաց յայտնապէս ըզգաղանի պատերազմն » : —

Ազգք եւ ազինք մեկտեղ եկած՝ իրար անցան մեծ բազմութեամբ ,
Եւ ջրկըրցան մեկ կրտորճին քաջութեանը յաղբող լինել .
Զի Աստուծոյ աներեւոյթ ոյժն օգնութեան հասաւ անոր ,
Եւ յայտնապէս ոյժը կոտրեց այն դաւաճան պատերազմին :

« Ի վերայ միոյ պատուական մարդարտի
Խաղացին ցընծալով ամենայն հեթանոսք .
Արեւմուտըք յարեւելս ընթացեալք հասին
Քարօզել յայտնապէս ըզջըքնաղ տեսութիւնն » : —

Մեկ հատիկ պատուական մարդարտի մի վերան
Ուրախութեամբ հաւարուեցան հերանոսներն առ հասարակ .
Ողջ արեւմուտքը վագելով եկաւ հասաւ ի յարեւելք ,
Ամեն տեղ հրուչակելով Հոփսիսմէին ջրքնաղ տեսքը :

« Լըւան թագաւորք եւ լըցան խընգութեամբ ,
Որսալ յանձն առին ըզգաղանի մեծութիւնն ,
Պարգեւել իրերաց խոստանային բանիւք ,
Եւ ծածուկ հընարիւք գողանալ ի միմեանց » : —

Թագաւորները լըսեցին , ուրախութեամբ լըցուեցան ,
Ամեն ջանք ի գործ դըրին որ ծածկեալ գանձը ձեռք ձրգեն .
Իրարու գայն պարգեւել խօսք կուտային խարեութեամբ ,
Եւ ծածուկ հընարքներով կրգողնային գայն իրարմէ :

« Խորհուրդք հոգեւոր յըղութեանցըն յայտնէր ,
Եւ երկունք փրկութեան աշխարհի ճեպէին .
Քանզի կամըք վերին հրամանին քաղցրացեալ
Իջուցին ի վերուստ ըզպարգեւս փրկութեան » : —

Այն հոգեւոր յըղութեանց խորհուրդը կըլայտնուէր ,
Եւ աշխարհիս փրկութեան ձընընդեան ցաւը կըստիպէր .
Զի Բարձրելոյն բարկութիւնն ի քաղցրութիւն մեզ դառնալով
Փրկութեան պարգեւները վերին առ մեզ իջեցուցին :

« Ծընան կուսանք ազգըս բազումս ,
Եւ մարըք մանկունք ըզհրապարակըս ծերոց .
Ի գիւրկըս սրբութեան աղօթից եւ պահօց
Աճեցին հաւատով զարգացեալք ի Քրիստոս » : —

Կոյս աղջիկները մայր եղան բազմաբիւ ժողովրդոց ,
Գեոհանասակ մայրերը ծերեր ծընան պատկառելի ,
Որ աղօթքով ու պահքերով նոցա սուրբ զերկը մեծնայով
Քրիստոսի սուրբ հասարակութիւն ատենի մեջ անեցան :

« Կանայք պատուականք քաղաքաւ եւ ազգաւ ,
Վաճառականք առատք անյայտ մարգարտին ,
Եղին զանձինքս գրաւականքս բազմաց ,
Եւ եղեն փրկականք անձանօթ աշխարհին » : —

Պատուական քաղաքի՝ ազնիւ ազգէ կրեկմարդիկ ,
Ճոխ եւ հարուստ վաճառականք մարգարտի պես սուրբ հասարակին ,
Իրենք զիրենք վեճանձնութեամբ զըրաւ զըրին ազգի համար ,
Եւ անձանօթ ժողովրդոց ազատութեան փրկականք եղան :

« Հռիփսիմէ մեծ խորհուրդ եւ անուն ցանկալի ,
Ընտրեալ ի յերկրի եւ դասեալ ընդ հրեշտակս .
Եղեր օրինակ սրբութեան կուսանաց ,
Վարդապետութիւն արանց արգարոց » : —

Ո՛վ Հռիփսիմէ , վարքդ ու անունդ խորհրդատու եւ ցանկալի ,
Այս աշխարհես ընտրուեցար ու հրեշտակաց կարգը անցար .
Դուն կուսանաց սուրբ մաքրութեան ըսքանչելի եւ օրինակ ,
Եւ չափանաս արդարներու ազդու խըրատ եւ կրթութիւն :

« Ձեզ նըմանել կարօտին ամենայն հոգիք ,
Միացեալք սրբութեամբ եւ սիրոյն Քրիստոսի .
Ձի մահուամբ ձերով մեզ ճանապարհ հորդեցիք
Ելանել ամենայն մարդոյ առ Աստուած » : —

Ամեն մարդ կրփափաքի ձեր ընթացքին հետեւելու ,
Որ Քրիստոսի հետ միացաք ձեր սրբութեամբն ու սիրովը .
Վասն զի դուք ձեր մահուամբը առջեւնիս ճամբայ բացիք ,
Որով ամենքս կարող եմք Աստուծոյ քովը բարձրանալ :

« Ղեկավարըք ճարտարք հոգեւոր հըմուտթեամբ ,
Թեթեւաբեռն մարմնով եւ մըտօք սըլացեալք ,
Ընդ երկայն առպարէզս ծովածովի կենցաղոյս
Անվընաս նաւեցիք եւ հասիք առ Քրիստոս » : —

Մեկ մեկ վարպետ ղեկավար էք հոգեւոր ճարտարութեամբ ,
Որ ձեր բերեւ մարմնոյն նաւով ու սուրբ մըտքովը սըլացաք ,
Այս աշխարհիս ալեկոճեալ ծովուն երկայն ճանապարհով
Անվընաս նաւարկեցիք եւ Քրիստոսի քովը հասաք :

« Ճըշմարիտ որթոյն Քրիստոսի շառաւիղք ,
Եւ ողկոյզըք ճըմլեալք երկնաւոր մըշակին ,
Կոխեցայք ճըգնութեամբ ի հընձանքս ձեր ,
Ձի ուրախ լինիջիք անմահական բաժակաւն » : —

Դուք մեկ մեկ ճիւղեր էք Փրկչին որ որք է ճըշմարիտ ,
Եւ մեկ մեկ ընտիր ողկոյզ՝ որ քամուեցաք Հօր Աստուծոյ .
Ձեր հընձանին մեջ կոխուեցաք անտանելի բարբարանօք ,
Ուստի ուրախ էք յախտեան անմահութեան բաժակովը :

« Մերժեցին ըզկարիս մարմնական կենցաղոյս ,
Ձի ծանեան եթէ երազ է եւ սուտ պաճուճանք .
Ո՛չ հեշտացան ի գըրգանս փափկութեան ,
Իմացան եթէ սնտախ է անցաւոր մեծութիւնս » : —

Աշխարհիս կիրքն ու կարիքը ոտքի տակ կոխկրուեցին ,
Քանզի զիտցան որ երազ են ու սուտ ու մուտ զարդարանքներ ,
Համ մը չառին չըզմայլեցան փափուկ կենաց զըրգանքներն ,
Լաւ հասկըցան քե որքան փոճ է աշխարհիս մեծութիւնը :

« Յանդաստանքս հոգեւորս ազօթից եւ պահոց
Վաստակեալք յուսով զամենայն ժամանակս ,
Ժուժկալեալք փորձութեանց եւ պէսպէս լըլկանաց ,
Եւ եղեալք ժառանգորդք անթառամ պըսակին » : —

Աղօթից եւ պահոց հոգեւոր արտերուն մեջ
Աշխատեցան հաստատ յուսով իրենց բոլոր կենացը մեջ -
Քաջութեամբ համբերեցին ամեն տեսակ տառապանաց ,
եւ իրաւամբ ժառանգեցին այն անբառամ պըսակները :

« Նախանձելի յօրինեցին զառագաստ կուսութեան ,
Նոր նորոգեալ արեամբ եւ Հըրով .
Մատնեցին զանձինըս սուսերաց եւ ջահից ,
Եւ անշէջ լապտերօքըն հետեւեալ մըտին յառաջ ասան » :

Կուսութեան առագաստը նախանձելի բան մի արին ,
Զարդարելով զայն նոր զարդով՝ արինով ու կըրակով .
Իրենք զիրենք մատնեցին բըրերու եւ ջաներու ,
եւ այնպէս վառ լապտերօք մըտան երկնից առագաստը :

« Եինուածք երկնաւորք ի յերկրի հաստատեալք ,
Եւ արձանըք լուսեղէնք ի յերկինըս կանգնեալք .
Ինքեանք ելին եւ այլոց ցուցին
Ըզճանապարհըս ցանկալի զվերինն երուսապեմի » : —

Երկնային շինուածքներ երկրիս երեսը հիմնուած ,
Լուսեղէն սուրբ քարեր մինչեւ յերկինըս բարձրացած .
Իրենք ելան զընացին , ուրիշներուն ալ ցուցուցին
Ի վերինն երուսապեմ տանող սիրուն ճամբաները :

« Ո՛վ ըզգաստութեան իմաստուն կուսանացն ,
Որոց ոչ յալթեաց հեղգութիւն եւ քուն . (նեացն ,
Այլ արթունք եւ պատրաստք մընալով երկնաւոր հարսա-
Զի մըտցեն ի յառագաստ անմահ վեասյին » : —

Զարմանալի է զգաստութիւնն այս իմաստուն սուրբ կուսանաց ,
Որոց ոչ քուն կըրցաւ յաղբել , ոչ բուլուրիւն կամ նեղգութիւն ,
Այլ միշտ արթուն՝ ըսպասելով երկնային փոսին զայուն
Նորա հետ զնացին մըտան այն ցանկալի առագաստը :

« Զունի որ ի նոսա անուն չարութեան ,
Եւ ոչ նախատինըս յիմար կոչելոյ .
Քանզի միով պընդութեամբ հոգւով արութեան
Միաբան քաջացան , առ հասարակ ցընծասցեն » : —

Զրկայ մեկը նոցա մեջ որ գեշ անուն ունենայ ,
եւ ոչ յիմար ասուելու նախատական անունը .
Ամենքք միարան միօրինակ քաջութեամբ
Ի միասին արիացան , ի միասին ալ կըրցնծան :

« Պարակցեալըք քաջազէն բըռնութեամբ
Ի յերկրէ ի յերկինըս տարազէմ գընացին փախըստեայք .
Ինքեանք ելին եւ մեզ ուսուցին
Բազում նեղութեամբ մըտանել յայն հանգիստ » . —

Իրարու հետ պար բռնած անքակտելի քաջութեամբ
Երկրես երկինք փախչելու պէս ուրախութեամբ վեր զընացին .
Իրենք ելան բարձրացան ու նաեւ մեզ սովընցուցին
Թէ նեղութիւն շատ քաշելով կըրնամք մըտնել այն հանգիստը :

« Զերմեռանգն աղօթիւք եւ սիրովն առ Աստուած
Հայցեցին ըզհընարըս փըրկութեան , (լսարհէ ,
Բառնալով ըզխաւար գիււապաշտ մոլորութեանց յաշ-
Պայծառացեալըք լուսովն որ ի չօրէ ծագեցաւ » : —

Զերմեռանդ աղօթքներով եւ Աստուծոյ սիրով վառուած
Թ՛՛ իրենց եւ թէ այլոց փըրկութեան ճար մըտմըտացին .
Կուսապաշտութեան բանձըր խաւարը վերուցին մեր աշխարհես ,
Պայծառացան այն լուսովը որ ծագեցաւ մեզ ի չօրէ :

« Ռահըս յոլովս առաքինութեան
Յայտնեցին որդւոց մարդկան վերանալ յաշխարհէ .
Անըստերիւր հոգեւորական վարուք
Ելանել ի բանակս երկնաւորս անմարմին հրեշտակաց :

Շատ տեսակ ճամբայ բացին առաքինի եւ սուրբ վարուց,
եւ մարդկանց սովբեցուցին այս աշխարհես երկինք վերնալ,
Հոգեւոր եւ անխոտոր անմեղ վարքով եւ ընթացքով
Անմարմին հրեշտակներուն բանակներուն մէջը մըտնել:

« Սոքա են քարինըք սուրբք հիմնեցեալք ի յերկրի,
Ձոր կանխաւ տեսեալ գուշակեաց մարգարէն,
Ի նոյն ի նիւթոյ շինեցաւ կաթուղիկէ եկեղեցի
Բարձրացեալ փառօք ի պարծանքս խաչին »: —

Սոքա այն սուրբ քարերն են՝ երկրիս երեսը հիմ դըրուած
Որ մարգարէն Չաքարիա վաղուց տեսաւ ու գուշակեց .
Նոյն քարերովը շինուեցաւ Հայաստանեայց Կաթողիկէն
Եւ բարձրացաւ շրջեղութեամբ, փառք ու պարծանք սրբոյ Խաչին .

« Վասըն ձեր, երանեալ նահատակք,
Ձօրըք հրեշտակաց անմարմին զըւարթնոց
Ի յերկնից ի յերկիր հեղան, (տոսի Աստուծոյ »:
Եւ մարգիկ խառնեցան ի գունդըս զինուորաց Քրիս-

Ձեր քաջութիւնը տեսնելու, ո՞վ երջանիկ նահատակներ,
Հրեշտակներու բանակները, այն անմարմին զըւարթուները
Երկրներէն երկրիս երեսը բախեցան մեծ բազմութեամբ,
Եւ մարդիկ խառնուեցան Քրիստոսի սուրբ զօրացը մէջ:

« Տօնեսցուք ըստուգութեամբ ի հընձանքս նոցունց,
Ձի արբեալըք լիցուք անմահական բաժակաւն .
Քանզի բաշխեն ըզբըժըշկութիւն հոգւոց եւ մարմնոց,
Եւ զպարգեւս երկնաւորըս սիրողաց իւրեանց »: —

Հոփսիսմեանց հընձանին տեղը հաւատքով տօն կատարեմք,
Այնպէս որ արբենամք անմահական բաժակովը .
Ձի նոքա այս տեղէն հոգւոյ մարմնոյ բըժըշկութիւն
Եւ երկնային շնորհք կըրթանեն իրենց ջերմ ուխտաւորաց:

« Բարունւոյն հրամանաւ աներեւոյթ ազգմամբ
Յարեւմըտից յարեւելս եկեալ հասին .

Ձի լուսով հրեշտակական վարուք կուսութեան
Փարատեցին ըզխաւար գիւտապաշտ մոլորութեանց »: —

Քրիստոսի Փրկչին մերոյ աներեւոյթ հրամանովը
Արեւմուտքէն մինչ արեւելք ճամբորդութեամբ եկան հասան,
Եւ իրենց կուսական հրեշտակային վարքին լուսով
Կուսապաշտական մոլորութեանց բանձըր խաւարը ցըրուեցին:

« Յընձութեամբ տօնեսցուք ըզյիշատակըս նոցունց,
Ձի եւ նոցին հազորդեսցուք փըրկութեան .

Խնդրելով յԱրարչէն ըզպարգեւս երկնաւորս,
Եւ զգասեւն ընդ նոսին ի յարկսըն լուսեղէն »: —

Յընձութեամբ կատարեմք նոցա տօնին յիշատակը,
Որ նոցա երջանկութեանը մասնակից լինել կըրնամք,
Խընդրելով մեր Արարչէն երկնային սուրբ պարգեւներ
Որովք նոցա հետը շարուիմք այն լուսեղէն յարկացը մէջ:

« Ի իւծեալըք մաշեցան յուսացեալք ի մեծութիւն .
Եւ կանայք վեհազինք գերազանցեալք յաղթեցին .
Բուրվառք ոսկեղէնք հըրով Հոգւոյն վառեցան, (տակս »:
Ձահազգեստեալք ի Քրիստոս եւ դասեալք ընդ հրեշ-

Աշխարհիս մեծութեամբ պարծեցողները փըճացան,
Եւ ազնիւ կրնիկմարդիկ արիացան ու յաղթեցին .
Ոսկեղէն բուրվառներ՝ Հոգւոյն կրակովը վառեցան,
Քրիստոսի լուսով լըցուած՝ լուսեղինաց դասակցեցան:

« Փառաց ի փառըս բարձրացեալ պարծին
Ի պատիւ եւ ի փառս երեսուն եւ եօթեանքն .

Քանզի այս է թիւ երանեալ կուսանացն
Որ անթառամ պըսակեցան յանվախճան յաւիտեան »: —

Գերագոյն պատիւներով փառաւորուած կը պարծենան
 Երկնային փառքերու մէջ այն երեսուն եօրը հոգին .
 Վասըն զի երանելի սուրբ կուսանաց այս է բիւր ,
 Որ անբառամ պըսակներով պսակուեցան յաւիտեան :

« Բեզ որ ցընծութիւնդ ես Քրիստոս Աստուած ,
 եւ ուրախութիւն ամենայն արդարոց ,
 Քաղցրասցին վասըն մեր աղաչանքը սըրբոցն .
 Շնորհելով զթողութիւն մեր բազում յանցանացն » : —

Ո՛վ ցընծութիւնդ սըրբոց՝ Քրիստոս Որդի Աստուծոյ ,
 եւ ամենայն արդարոց ուրախութիւն անպատում ,
 Ընդունե՛ այն սըրբոց մեզ համար աղաչանքը ,
 եւ բողոքիւն պարգեւե՛ մեր բազմաբիւ յանցանքներուն :

Deo

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ.

Որովհետեւ այս հրատարակութեանս նիւթերը
 երկու գլխաւոր խոմբ կբաժնուին , մէկը կրօնական
 եւ միւսը *arsuffin* , արժան դատեցինք՝ անուննե-
 րով եւս զանազանել ասոնք իրարմէ , եւ կրօնականաց
 շատին վրայ աւելցընել ՔԱՐՈՋ անունը : — Յայտնի
 բան է որ այս զանազանութեամբ մեր աշխատասի-
 րութեան ոչ նպատակը կփոխուի , ոչ լեզուն եւ ոչ
 ոճը . վասն զի *fauna* անուանածներս ալ՝ գէթ ըստ
 մեծի մասին՝ պիտի լինին դարձեալ ընտանեկան
 ոճով պատմուած հոգեշահ պատմութիւններ , եւ
 առանց ճարտասանական զարդարանքներու տըր-
 ւած խրատներ ըստ աւուրց պատշաճի . իսկ յա-
 ղանները կմնան նոյնպէս պարզ եւ դիւրիմաց ոճով
 եղած բացատրութիւններ առ հասարակ ուսումնա-
 կան , պատմական , աշխարհագրական , եւ ուրիշ
 արտաքին օգտակար տեղեկութեանց :

ԳԱՐԸ. ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆ.

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ.

Աւագ Երկուշաբթի.
Աւագ Երեքշաբթի.
Աւագ Չորեքշաբթի.
Երուսաղեմի առումն ու տաճարին կործանումը.
Կոստանդնուպոլսոյ առումն յՍմանեանց.
Աւագ Հինգշաբթի.
Աւագ Ուրբաթ.
Զատիկ սուրբ Յարութեան Տեսուն.
Սուրբ Հոփփսիմեանք.

ՊԱՏՐԱՍՏԻ Ի ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Համբարձումն.
Հոգեգալուստ.
Վարդավառ.
Վերափոխումն.
Սուրբ Խաչ.
Ծնունդ եւ Յայտնութիւն Տեսուն.
Տեսունընդասաշ.
Բուն Բարեկենդան.
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ.
Ռդիք եւ բոռունք սրբոյ Լուսաւորչին.
Մեծն Երեսե Պարբե.
Սուրբ Սարգիս Զօրավար.
Սուրբ Մինաս.
Սուրբ Անտոն ճգնաւոր.
Յօր երանելի.
Թաղէոս առաքեալ, Ս. Սանդուխտ կոյս, եւ Ս. Շուշանիկ.
Ժամ եւ Ժամերգութիւն.
Երկինք.
Արեւն ու Մոլորակները.
Զերմութիւն եւ Զերմաշափ.
Մեռեորագիտութիւն, կամ Գուշակութիւնք օղոց.
Մրջինք եւ Մեղութ.
Տնտեսութիւն.
Եզիպտոսի հնութիւնները, եւ այլն :

Գին իւրաքանչիւր տետրակի 20 ֆոփ.

